ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ
Հավելված 1

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) հայտարարում է Mastercard World Elite քարտի թողարկման միջոցառման կազմակերպման,

հրապարակային **բաց** մրցույթ, կից ներկայացվող պահանջներին համապատասխան՝

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Բանկի կենտրոնական գրասենյակ, ք. Երևան, Արամի 82-84 հասցեով, Լոգիստիկայի բաժին:

Մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2026թ.-ի մայիսի 29-ը, ժամը 16:00-ն:

Մրցույթի հայտերի բացման նիստի օրն է 2026թ.-ի հունիսի 3-ը:

Մրցույթի հայտերը ամփոփվելու են մինչև 2026-ի հունիսի 10-ը:

Մրցույթի մասնակցության համար նախավճար սահմանված չէ:

Մրցույթի հաղթող ընկերության հետ պայմանագիրը կարող է կնքվել բացառապես <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ԲԲԸ-ում բանկային հաշիվ ունենալու դեպքում:

Մրցույթի մասնակցության համար մասնակիցները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Բանկի կողմից սահմանված ձևով կազմված և պատշաճ կարգով լրացված Մրցույթի մասնակցության հայտ՝ eFO 81-00-05,
2. մրցույթի մասնակցի հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք կհաստատեն իր կողմից կատարվելիք աշխատանքների կամ մատուցվելիք ծառայությունների որակը:

Բանկը, մրցույթի հայտ ներկայացրած մասնակիցների ցանկից, իր ներքին իրավական ակտով սահմանված կարգով ընտրում է այն մասնակցին, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ առաջարկել է լավագույն պայմաններ: Բանկը տասն օրվա ընթացքում հաղթող ճանաչված մասնակցին առաջարկ է ներկայացնում իր հետ կնքել աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու պայմանագիր:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել առձեռն կամ փոստային ծառայության միջոցով՝ պատվիրված նամակով:

Մրցույթի հայտերը պետք է ներկայացվեն սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով (կնիքի բացակայության դեպքում՝ միայն ստորագրված):

Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից: Ծրարի վրա պետք է նշվեն մրցույթի մասնակցի անունը ազգանունը (անվանումը), հասցեն, հեռախոսահամարը, ինտերնետային կայքի հասցեն (առկայության դեպքում) և կատարվեն հետևյալ գրառումները. «Մրցութային հանձնաժողովին», Բանկի հասցեն, «Չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը»:

Միջոցառման կազմակերպման հետ կապված տեղեկությունների համար կարող եք զանգահարել Բանկի Մարքեթինգային հաղորդակցությունների բաժնի աշխատակից Մարիամ Սուքիասյանին (37410) 31-88-88 (8411) հեռախոսահամարով

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել (37410) 31-88-88 (7077) հեռախոսահամարով, Լոգիստիկայի բաժնի պետ Արտակ Ղազարյանին: